ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան
Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1210: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468
18002

*Ոսկի՛ն է նվաճել իշխանություն ու փայլ,*
*Բաժանել արյունոտ դափնիներ...*

*Եղիշե Չարենց*

***ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ՄԱՐՏԻ 2018Թ.***
*№ 7 (465)*

# Սյունյաց աշխարհ

www.syuniacyerkir.am

## «Սյունիքի մարզի «ֆիշկաներից» մեկն Իրանի շուկային մոտ լինելն է». Կարեն Կարապետյանը մարզային խորհրդակցություն է անցկացրել Գորիսում

Վարչապետ Կարեն Կարապետյանը մարտի 7-ին այցելել է Սյունիքի մարզ՝ ծանոթանալու 2017 թ. մարզի եւ համայնքների զարգացման ծրագրերի շրջանակում ըստ ոլորտների իրականացված միջոցառումների արդյունքներին ու 2018 թ. անելիքներին:

Ներկայացնելով Սյունիքի մարզի 2017թ. մակրոտնտեսական ցուցանիշները՝ մարզպետ Վահե Հակոբյանը նշել է, որ արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 275.04 մլրդ դրամ, գյուղատնտեսականինը՝ 62,1 մլրդ դրամ, շինարարությանը 18.08 մլրդ դրամ, մանրածախ ապրանքաշրջանառությանը՝ 19.4 մլրդ դրամ, վճարովի ծառայություններինը՝ 35.5 մլրդ դրամ:

Զարգացման ներդրումային եւ վարկային ծրագրերի շրջանակում իրականացվել է 40.2 մլրդ դրամի ներդրում, ստեղծվել է 573 հիմնական աշխատատեղ: 2018թ. նախատեսվում է 52.2 մլրդ դրամի ներդրում եւ 1077 ոչ գյուղատնտեսական աշխատատեղի ստեղծում: Մասնավոր հատվածի ներդրումային ծրագրերի շրջանակում Կապանում «Իտալիան Ֆուդ Կորպորեյշն» ՍՊԸ-ի ջանքերով արդեն գործում է իտալական պիցցայի արտադրության ձեռնարկություն, ստեղծված է 10 աշխատատեղ,

էջ 7

## Հեռացող վարչապետը Սյունիքում քաջություն չունեցավ բարձրացնել եռացող կաթսայի կափարիչը եւ առերեսվել իրականության հետ

Երբ 2016թ. նոյեմբերի 4-ին նորանշանակ վարչապետ Կարեն Կարապետյանն այցելեց Գորիս՝ հանդիպելու Սյունիքի իշխանավորների, հասարակության ներկայացուցիչների հետ, աշխուժություն եւ ոգեւորություն սկիզբ առավ մարզում: Հարյուրավոր մարդիկ ուղիներ էին փնտրում՝ մասնակցելու այդ հանդիպմանը, լսելու կառավարության նոր ղեկավարի հուսաբեր խոսքը:

Մեր թերթի ստեղծագործական խումբը նույնպես մասնակցեց վարչապետի սյունիքյան «դեբյուտին», որը, առանց չափազանցության, հույսի եւ հավատի հանդեսի վերածվեց:

Նույնիսկ չկարեւորվեցին շինծու եւ սադրիչ հարցերը, որոնք Վահե մարզպետը գաղտնաբար մոգոնել եւ տրամադրել էր իր մտերիմ մի քանի հոգու՝ վարչապետին ուղղելու՝ դրանով իսկ իր ղեկավարությանը հանճնված մարզի վիճակն առավել սեւ գույներով ներկայացնելու նպատակով…

Մեկուկես տարի անց՝ 2018թ. մարտի 7-ին, վարչապետ Կարեն Կարապետյանը հինգերորդ անգամ այցելեց Սյունիք:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ եկել էր ծանոթանալու մարզի եւ համայնքների զարգացման ծրագրերի շրջանակում ըստ ոլորտների 2017թ. իրականացված

էջ 6

## Սումգայիթյան ողբերգության 30-րդ տարելիցը

ԽՍՀՄ կենտրոնական մարմինները եւ ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել հայերի օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, որոշեցին ոտնահարել համամարդկային իրավունքի բոլոր չափանիշները, ժողովրդական շարժմանը հակադրել բիրտ ուժն ու բռնությունը:

1988թ. փետրվարի 26-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովը հատուկ կոչով դիմեց Ադրբեջանի եւ Հայաստանի աշխատավորներին՝ հորդորելով դադարեցնել ցույցերն ու հանրահավաքները՝ խոստանալով առաջիկայում լուծել բարձրացված հարցերը: Նույն օրը տեղի ունեցավ ՀԿԿ կենտկոմի պլենում, որի աշխատանքներին մասնակցեցին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ.Դոլգիխը եւ Ա.Լուկյանովը: Պլենումում ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ.Դեմիրճյանը պաշտպանեց Մ.Գորբաչովի կոչը՝ ավելացնելով, որ պետք է «Կարգ հաստատենք եւ իրագործենք Գորբաչովի առաջ քաշած պահանջները» (ՀԱԱ, Ֆ. 1, գ.21,թ.4-5): Հայ ժողովուրդը մեկ անգամ եւս հավատաց կենտրոնական իշխանություններին եւ դադարեցրեց գործադուլներն ու հանրահավաքները: Իսկ ադրբեջանցիներն ընդհակառակը, ոչ միայն չդադարեցրին, այլեւ նոր թափ հաղորդեցին հակահայկական ելույթներին եւ դիմեցին վայրագ գործողությունների:

Բաքվից 35 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում 1988թ. փետրվարի 26-ից սկսած հակահայկական հանրահավաքներ կազմակերպվեցին, որոնց գլխավորում էին քաղաքի Կոմունիստական կուսակցության շրջկոմների քարտուղարները: Հետագայում Սումգայիթի պաշտոնանկ արված քաղկոմի քարտուղարը հայտարարեց, որ այդ բոլորը կազմակերպվել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի եւ նրա առաջին քարտուղարի ցուցումով: Դրան հավանաբար տեղյակ էին Մ.Գորբաչովը եւ նրա շրջապատը (Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит…Геноцид…Гласность?, Ереван, 1989, с.55.):

Փետրվարի 27-ին ադրբեջանական խուժանը «մա՛հ հայերին» կոչով տեղական իշխանությունների աչքի առաջ կատարեց հայ ազգաբնակչության կոտորած, որը տեւեց մինչեւ փետրվարի 29-ը:Պաշտոնական տվյալներով տանջամահ էին արվել 32 մարդ, խոշտանգվել եւ ծանր վիրավորվել ավելի քան 200 հոգի (Տե՛ս նույն տեղում, էջ 18, 19): Ոչ Սումգայիթի հանրահավաքները, ո՛չ կոտորածները պատահական չեն եղել, ինչպես հետագայում փորձում էին ներկայացնել ադրբեջանական իշխանությունները: Նախօրոք կազմել էին հայերի բնակարանների ցուցակները, անջատել հեռախոսները, պահեստավորել ինքնաշեն զենքեր: Փետրվարի 26-29-ին Սումգայիթի միլիցիան չի գործել: Քաղաքը խուլ շրջափակված էր, ճանապարհներն ու երկաթուղին գտնվում էին զինված ջոկատների հսկողության տակ: Գազազած խուժանը հայերին սպանում էր բնակարաններում, տանջամահ անում փողոցներում ու հրապարակներում, այրում կենդանի մնացած մարդկանց: Այդ հանցագործության նպատակն էր փակել

էջ 2

# Սումգայիթյան ողբերգության 30-րդ տարելիցը

էջ 1

Արցախի հիմնահարցի քննարկման հեռանկարները, նոր ջարդերի կազմակերպման սպառնալիքով ահաբեկել հայերին եւ նրանց հարկադրել հրաժարվել ազատագրական պայքարից: Երեք օր տեւած ջարդերից հետո միայն, փետրվարի 29-ի գիշերը խորհրդային զորքը մտավ Սումգայիթ, որին մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրագությունները եւ քաղաքից դուրս հանել կենդանի մնացած հայերին: Ավելի քան

երեք հազար սումգայիթաբնակ հայեր, կորցնելով իրենց բնակարանները եւ ունեցվածքը, հրաշքով փրկվելով սպանդից, պատսպարվեցին Հայաստանում, իսկ մնացածները Ադրբեջանից փախան տարբեր ուղղություններով: Ըստ որում՝ նրանց թույլ չէին տալիս փոխադրվել Ղարաբաղ:

Կենտրոնական իշխանությունները ձգտում էին հասարակությունից թաքցնել սումգայիթյան ողբերգությունը՝ այն ներկայացնելով որպես խուլիգանական տարրերի գործողություն: Ավելին, կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը դատապարտում էին «պրոլետարական միասնությունը խաթարող հայ անջատականներին», հակահայկական թույն սփռում ամբողջ երկրով մեկ: Մոսկվայի ադրբեջանամետ քաղաքականության պատճառով սումգայիթյան ոճրագործները մնացին անպատիժ: Դա ադրբեջանաբնակ հայերի նկատմամբ լայնածավալ հալածանքների եւ բռնի տեղահանումների ազդակ հանդիսացավ: Ամբողջ Ադրբեջանում ծայր առավ վայրենի խրախճանք, ամենուր ջարդարարների գործողություններն ուղեկցվում էին հայերի սպանություններով, բնակավայրերի ավերումով ու թալանով:

**ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**
**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**
**Երեւանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետի դեկան**

# Սամվել Ալեքսանյանի մամուլի ասուլիսը Երեւանում

2018թ. մարտի 2-ին «Նոյյան Տապան» լրատվական կենտրոնում տեղի է ունեցել «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի մամուլի ասուլիսը:

Թեման էր՝ **«««Սյունյաց երկիր» թերթի դեմ մարզպետ Վահե Հակոբյանի ձեռնարկած ապօրինությունների վերջին դրսեւորումները»»:**

Մոտ երկու հազար հոգի ուղիղ հեռարձակման շնորհիվ հետեւում էին ասուլիսի ընթացքին:

Սամվել Ալեքսանյանը մեծ բացթողում համարեց իրո-

ղությունը, որ մայրաքաղաքային հարթակները չեն օգտագործվում Սյունիքում տեղի ունեցող կամայականությունները հանրայնացնելու համար եւ խոստացավ, որ նման ասուլիսներ պարբերաբար կլինեն: Ըստ բանախոսի՝ Սյունիքը մեր պատմության բոլոր փուլերում (սկսած ուրարտական ժամանակներից մինչեւ Հայաստանի 3-րդ հանրապետություն) եղել եւ մնում է Հայոց անկախ պետականության ողնաշարը: Եվ Սյունիքի մարզի կենսունակությամբ է պայմանավորված մեր նոր պետության կառուցման հաջողությունը: Ուստի եւ սյունիքյան անցուդարձը հետայսու պետք է լինի հայ հանրության ուշադրության կենտրոնում:

Ասուլիսին մասնակցող լրագրողներից մեկի հարցին, թե ինչպե՞ս է թերթի խմբագիրը պատկերացնում մարզպետ-թերթ կոնֆլիկտի ելքը, Սամվել Ալեքսանյանը մասնավորապես ասաց. **«Վահե Հակոբյանի հետագա պաշտոնավարման հարցը կառավարության լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարց է: Բայց չմոռանանք, որ ցանկացած իշխանության աղբյուր ժողովուրդն է, ինչը դեռեւս 19-րդ դարի կեսերին հռչակել են ֆրանսիացի լուսավորիչները: Դա նշանակում է, որ Վահե Հակոբյանի հետագա պաշտոնավարման հարցը քննարկելիս պետք է նկատի ունենալ նաեւ Սյունիքի բնակչության կարծիքը: Իսկ որպես առաջին քայլ պետք է հրապարակավ արձանագրել ակնհայտ ճշմարտությունը՝ Վահե Հակոբյանը Սյունիքի մարզպետի պաշտոնում չի կայացել, ինչից չպետք է ողբերգություն սարքել, լացուկոծ անել:**

**Նրա ուժերը միգուցե եւ այլ ոլորտում օգտագործվեն, բայց պայմանով, որ հանրության հետ, մարդկանց հետ շփումներ չունենա, քանի որ դա նրան չի հաջողվում:**

**Մեկ ուրիշ ճամփա էլ կա. մենք քրիստոնյաներ ենք, իսկ քրիստոնեության յոթ խորհուրդներից մեկն ապաշխարությունն է: Նա կարող է մեղքերի խոստովանություն անել եւ թողություն խնդրել, իսկ մենք, Սյունիքի հոգեւոր դասի հետ, ապաշխարության արարողություն կկազմակերպենք Տաթեւի վանքում՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացու շիրիմի մոտ»»:**

Սամվել Ալեքսանյանը վերահաստատեց նախկինում հաստատած տեսակետն առ այն, որ մենք անպայման տեսնելու ենք Վահե Հակոբյանի փախուստը Սյունիքից: Եվ դա այնքան հանկարծակի կարող է տեղի ունենալ, որ զորակոչված կանանց գնդի առաջապահները չեն հասցնի նույնիսկ սեւ զգեստներ հագնել ու Սիսիանի դարպասներից, հրաժեշտի երաժշտության ներքո, ճանապարհել նրան գրողի ծոցը:

Մամուլի ասուլիսի ամբողջ տեսագրությունը կարող եք դիտել nt.am, syuniacyerkir.am կայքերում:

**Սեփ.լրատվություն**

# Սյունիքի կանաչ խաբկանքը

Սյունիքի մարզում ժպտում ես, մինչեւ... ժպտում ես՝ կանաչ է, թեեւ նոսր, անտառ է՝ անբացատրելի խաբկանք է. անտառներն անտառաթփուտներ են: Նախ կանաչը տառնում է վեր, այնուհետեւ կանաչ նոսրությունն ու պոչերը քաշում են վար: Ու չգիտես՝ երկնքո՞ւմ ես, թե՞ երկրի վրա, կանաչ դրա՞խտ է, թե՞ պղնձամոլիբդենային դժոխք: Ճանապարհը տանում է երկինք՝ մինչեւ ամպերից էլ վեր, սակայն նույն ճանապարհն իջեցնում է անդունդ՝ հանքարդյունաբերական իրականությունը:

Այցելուները կարող են նայել վեր, նայել վար, տարուբերվել դրախտի եւ դժոխքի միջեւ, իսկ մարզի բնակիչները ստիպված են ոչ միայն միշտ վար նայել, այլեւ ապրել վայրէջքի մեջ:

Կարելի է հայերենի գանձարանում գտնել համապատասխան ասացվածքներ՝ բնորոշելու Սյունյաց աշխարհի վայրիվերումներն ու հակադրությունները, սակայն այդ գանձարանն առոչինչ է՝ մարդը թանկ ռեսուրս է, առողջությունը թանկ է. նման արտահայտություններին:

Սյունյաց աշխարհում՝ ինչպես Հայաստանի ցանկացած անկյունում, գեղեցիկն ու տգեղը, սերը եւ ատելությունը, աղքատությունը եւ շքեղությունն, ապրում են հարեւանությամբ, անգամ ժամանակ առ ժամանակ այցելում են միմյանց:

Իսկ մարդիկ պարզապես ստիպված կուլ են տալիս ամենօրյա իրենց երկաթի, պղնձի ու մոլիբդենի չափաբաժինը, շնչում են անտառի թթվածնով հագեցած թունավոր մետաղների գարնանային բույրերը եւ զմայլվում նոսրուտով:

Սյունեցիները չափավոր երջանիկ են, քանի որ շատ երջանկությունը կարող է նրանց հասցնել կամ Արծվանիկի պոչամբարի հարեւանությամբ, կամ էլ Գեղանուշի. իհարկե պոչամբարալճային փիրուզագույնը զգլխիչ է, սակայն գեղեցկությունը խաբեություն արժե:

Արծվանիկի պոչամբարը շնչում է 300 միլիոն տոննա թունավոր զանգված. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆաբրիկայի հարուստ պոչերի առատությունը գնահատվում է. բնակիչներն իրենց վրա եւ իրենց մեջ են կրում այդ հարստությունը. սնունդը, մազերը, հագուստը, առօրյան հագեցած է պոչամբարային «հարստությամբ»: Հանքարդյունաբերությունն անտառների փեշով լցվում է գետերը եւ անցնում բնակիչների առօրյան, իսկ մարդիկ անվճար կուլ են տալիս հանքարդյունաբերական հացը, պոչամբարային լոլիկն ու վարունգը, երբեմն նախաճաշում անտառների ծանր մետաղային մուրաբաներով. ոչ միայն ամռանը, նաեւ ձմռանը, ոչ միայն թարմ, այլեւ պահածոյացած թունավոր նյութերը կլոր տարին բնակիչներին ապահովում են թունավոր մետաղային չափաբաժնով:

Ի դեպ, անվճար. չէ՞ որ մեր երկրում ոչինչ հենց այնպես չի տրվում. անգամ թույնը: Պղնձի, սնդիկի, մոլիբդենի չափաքանակների գերազանցում է արձանագրվել բանջարեղենի մեջ, իսկ սյունեցիները բանջարեղենն առատորեն օգտագործում են՝ այսպիսով անվճար օգտագործելով մարզի հարստությունը:

Իսկ Սյունիքի մարզի անտառները տարին կլոր կանաչ են ու պտուղ-

Սյունյաց աշխարհում՝ ինչպես նառատ՝ ծառերը զարդարված են պոլիէթիլենային մշտադալար գույնզգույնով, այդպիսով ներգրավվելով բազմաթիվ զբոսաշրջիկների՝ իրենց աչքով տեսնելու մարզի անտառների հարուստ բերքը:

Դեպի խորախոր անդունդները եւ ձորերը պատված են թարմ աղբամնացորդներով, որը եւս զբոսաշրջիկներին հետաքրքրում է իր բաղադրությամբ եւ տարատեսակությամբ: Կարելի է ե՛ւ զբոսաշրջությունը զարգացնել, ե՛ւ զբոսաշրջիկների իմացաբանականն ավելացնել հայրենի խոհանոցի եւ առ բնություն սիրո վերաբերյալ:

Իսկ գետերից կարելի է մանրամասներն իմանալ քիմիայի տարրերի միախառնումների եւ տարրալուծումների, միացությունների եւ տարասեռումների վերաբերյալ, իսկ գետերը շնչելիս պարզապես պետք է կենդանի երազանքներ պահես:

Կարճ ասած՝ գնացեք Սյունիք՝ բայց վերադարձեք:

**NEWSPRESS.am**
**7 մարտի 2018թ.**

# Անտառային տարածքների վրա ճնշումը թուլացնելու նպատակով

«Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում սոցիալական բաղադրիչով կատարված աշխատանքների առաջին փուլի արդյունքները գնահատելու եւ երկրորդ փուլի առաջնահերթությունների, համայնքների առաջարկների եւ առկա սոցիալական խնդիրների լուծմանը նպաստելու միջոցառումները քննարկելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորած աշխատանքային խումբը եռօրյա այցով եղել է ՀՀ Սյունիքի մարզում:

«Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի նպատակն է ուժեղացնել «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում ընդգրկված 7 բնության հատուկ պահպանվող տարածքների բնական պաշարների պահպանությունն ու այդ տարածքների կառավարումը՝ միաժամանակ բարելավելով հարակից համայնքների սոցիալ-տնտեսական վիճակը:

Պահպանվող տարածքների հարակից բոլոր 32 համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակներում իրականացվում են փողոցային լուսավորության ապահովում, վառելափայտի սպառումը կրճատող ջերմամեկուսիչ պատուհանների եւ վառարանների էներգախնայողությանն ուղղված հատուկ ծրագրեր, գյուղական տնտեսության եւ տուրիզմի զարգացման խթանում:

Աշխատանքային այցի առաջին օրը նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաեւ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Միքայել Մանուկյանը, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը եւ մարզպետարանի պատասխանատուներ:

ՀՀ բնապահպանության նախարարը նշել է, որ գերատեսչության նպատակներից է նպաստել Սյունիքի մարզին, որպես կենսաբազմազանության առումով Հայաստանի կարեւորագույն տարածաշրջանի, լինել այնպիսի ծրագրերի կենտրոնում, որոնք կնպաստեն ոչ միայն տարածաշրջանի, այլեւ Հայաստանի համապատասխան ոլորտի զարգացմանը: **«Ուրախ եմ, որ գտնվում եմ այստեղ եւ Ձեր հետ ունենալով արդյունավետ իրականացված, ընթացիկ եւ առաջիկայում իրականացվելիք ծրագրեր, նպատակ ունենք միջազգային մեր գործընկերների՝ մասնավորապես Գերմանիայի Դաշնային Հանրապետության աջակցությամբ, KfW բանկի, GIZ կազմակերպության եւ մի շարք այլ կառույցների հետ ՀՀ Սյունիքի մարզում իրականացնել**

**լայնամասշտաբ ծրագրեր: Հանդիպման նպատակն է համատեղ նախանշել լուծման առաջնային կարիք ունեցող այն գերակա խնդիրները, որոնք վերաբերում են մարզի շուրջ 150 հազար հեկտար տարածքին՝ ներառելով բոլոր ուղղությունները՝ կենսաբազմազանությամբ եւ այնտեղ բնակվող բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրներով: Առանց համայնքների մասնակցության հնարավոր չէ արդյունավետ ծրագիր իրականացնել: Շեշտը դրվում է սոցիալ-տնտեսական ծրագրերի վրա, որպեսզի թուլացվի ճնշումն անտառային տարածքների եւ ընդհանրապես կենսաբազմազանության վրա՝ մարդկանց մասնակից դարձնելով մեր ծրագրերին: Ծրագրերը նպաստելու են անտառային տարածքների ընդլայնմանը, պահպանմանը եւ կենսաբազմազանության ապահովմանը: Իրականացվող քաղաքականության եւ նմանատիպ ծրագրերի միջոցով մենք հասնելու ենք նրան, որ մեր հարստությունը եւ հիմնական եկամուտները ստեղծվեն բնապահպանության միջոցով»,**- նշել է Ա.Մինասյանը:

ՀՀ ԲՆ աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը ներկայացրել է ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները: Տեղեկացվել է, որ ծրագրի միջոցով բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից բոլոր 32 համայքներին տրամադրվել է 5000-ական եվրո դրամաշնորհային միջոցներ՝ նախապես քննարկված եւ հաստատված ծրագրերով: Դրանք ներառում են արագ մեկնարկի միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ՝ վառելափայտի սպառումը կրճատող ջերմամեկուսիչ նոր պատուհանների եւ վառարանների էներգախնայողությանն ուղղված հատուկ ծրագիրը, գյուղական տնտեսության եւ տուրիզմի զարգացումը, փողոցային լուսավորության ապահովումը: Ծրագրի իրականացման արդյունավետությունը եւ թափանցիկությունն ապահովելու նպատակով այն ներառվել է պետական բյուջեում եւ որպես խորհրդատվական մարմիններ, ծրագրի իրականացմանն աջակցում են Կապանում եւ Մեղրիում պետական եւ հասարակական կառույցների ներկայացուցիչներից ձեւավորված երկու տարածաշրջանային խորհրդատվական խորհուրդները եւ հասարակական կազմակերպությունների խորհրդատվական խումբը:

Աշխատանքային հանդիպման ժամանակ քննարկվել են հատուկ պահպանվող տարածքների սահմանների ճշգրտման, հողերի կարգավիճակների փոփոխման հարցեր:

Աշխատանքային այցի երկրորդ օրը բնապահպանության նախարարության աշխատանքային խումբն այցելել է կենսոլորտային համալիրում ընդգրկված «Սոսիների պուրակ» արգելավայր, ծանոթացել պահպանման ռեժիմին, եղել տնկարանում, որտեղ մասնակցել է ամեն տարի գարնանամուտին արեւելյան սոսու սերմերի ցանման աշխատանքներին:

ՀՀ բնապահպանության նախարարը Ներքին Հանդ գյուղում հետեւել է ծրագրի շրջանակներում գյուղի բոլոր տների նոր ջերմամեկուսիչ պատուհանների տեղադրման աշխատանքներին:

Սրաշեն եւ Ծավ համայնքներում Արծվիկ Մինասյանը մասնակցել է ֆինանսական մասնակցային մոտեցման շրջանակներում կազմակերպված գյուղմթերքների արտադրության ցուցադրության մրցույթի եւ մրցանակների հանձնման արարողությանը: Նախարարը եղել է նաեւ «Շիկահող» պետական արգելոցի վարչական շենքում՝ ծանոթացել այնտեղ տեղակայված այցելուների կենտրոնի պայմաններին:

**mnp.am**
**05-03-2018**

# Միփված զբոսաշրջության զարգացմանը

Փետրվարի 21-ը ոչ միայն մայրենի լեզվի, այլեւ զբոսավարների միջազգային օրն է, որ առաջին անգամ նշվել է 1990 թվականին: Օրվա խորհրդին համահունչ Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնի ամերիկյան անկյունում տեղի ունեցավ «Զբոսավարներ հարավից» զբոսաշրջության զարգացման հասարակական կազմակերպության շնորհանդեսը: Այն հիմնադրվել է անցյալ տարվա ապրիլի 7-ին: Կազմակերպության խնդիրներն ու նպատակները ներկայացրեց կազմակերպության նախագահ Ռոբերտ Մաթեւոսյանը, մասնավորապես, առաջնահերթ խնդիրներից նշելով արհեստավարժ զբոսավարների պատրաստումը, երկրի զբոսաշրջության ներուժի գնահատումը, զբոսաշրջային երթուղիների մշակումը:

Հընթացս ներկայացվեցին նաեւ կազմակերպության անդամները: Հկ-ն համագործակցում է «Հայ զբոսավարներ» գիլդիայի հետ, որի անդամն է «Զբոսավարներ հարավից» հկ-ն եւ որի շրջանակում Ռոբերտ Մաթեւոսյանը վերապատրաստվել է որպես զբոսավար: Նա նշեց, որ ծրագիր է մշակում գյուղական համայնքների հյուրատների ստեղծման եւ զբոսաշրջային երթուղիների հետ կապված:

«Զբոսավարներ հարավից» հկ-ի փոխնախագահ Դավիթ Հակոբյանը պատմական անդրադարձ կատարեց Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը, նաեւ ներկայացրեց ոլորտի այսօրվա վիճակը: Զբոսաշրջությունը Հայաստանում սկսել է զարգանալ 1930-ական թվականներից, երկուսուկես տասնամյակ հետո մեր երկիրն ընդգրկվեց համամիութենական տուրիստական երթուղիներում: Ինչպես Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, Հայաստանում եւս զբոսաշրջությունը զարգանում էր միայն կուսակցական վերին օղակների պլանավորմամբ: Յուրաքանչյուր տարի պետական ապահովության ընդհանուր ֆոնդից 1 միլիարդ դրամ էր հատկացվում արտոնյալ շրջագայություններին, հանգստի, առողջարանային բուժման նպատակով: Հայտնի պատճառներով 1988-ից Հայաստանի զբոսաշրջության ոլորտը սկսեց անկում ապրել: Արտասահմանցի զբոսաշրջիկների թվի կայուն աճ արձանագրվեց 2001 թվականից: 2003թ. Ազգային ժողովն ընդունեց «Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, որով էլ զբոսաշրջությունը ճանաչվեց երկրի տնտեսության գերակա ճյուղերից մեկը:

Բանախոսը ներկայացրեց տվյալներ՝ զբոսաշրջության ոլորտի այսօրվա վիճակին առնչվող, մասնավորապես, 2015-ի տվյալներով Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է մոտ մեկ միլիոն 260 հազար մարդ, ինչն ընդամենը 68 հազարով է ավելի նախորդ տարվա ցուցանիշից: Էական առաջխաղացում է արձանագրվել սպասարկման ոլորտում, ըստ զբոսաշրջության մրցունակության 2015 թվականի զեկույցի, սակայն Հայաստանը հետ է մնում ճանապարհների եւ երկաթուղային հաղորդակցության մատչելիությամբ: Զբոսաշրջիկները դժգոհում են նաեւ սանհանգույցների սակավությունից, աղբի առկայությունից եւ բնական միջավայրի որակից: Թերեւս դա է պատճառը, որ ըստ նշված զեկույցի, 2013-ին Հայաստանը 10 հորիզոնականով զիջել է դիրքերը՝ 141 երկրների շարքում հայտնվելով 89-րդ հորիզոնականում:

Դավիթ Հակոբյանը տեղեկացրեց նաեւ, որ «Զբոսավարներ հարավից» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ստեղծվել է «Հայ արշավական» ակումբ, որ նպատակ ունի արշավների միջոցով երիտասարդությանը ճանաչելի դարձնել իրենց երկրամասը, նրա պատմաճարտարապետական հուշարձանները:

Զբոսաշրջությամբ զբաղվելու իր փորձի մասին պատմեց «ԱՐԿ» բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Արմեն Ղազարյանը՝ շեշտը դնելով Կապանի տարածաշրջանում էկոտուրիզմի զարգացման վրա:

Շնորհանդեսի ժամանակ ներկայացվեցին հասարակական կազմակերպության պատրաստած՝ Վահանավանքին նվիրված բուկլետը եւ «Հարավային Սյունիքի թաքնված հրաշքները. Մեղրի, Կապան» գովազդային թերթիկը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Կանանց միամսյակի մեկնարկը

Մարտի 7-ին Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված հանդիսություն: Դրանով ըստ ամենայնի մեկնարկեցին կանանց միամսյակի նվիրված միջոցառումները:

Ինչպես առաջացավ այդ միամսյակ կոչվածը: Խորհրդային տարիներին մարտի 8-ը նշվում էր որպես կանանց միջազգային օր: Հայաստանի անկախության հռչակումից հետո մարտի 8-ը հանվեց Հայաստանի պետական տոնացույցից, փոխարենն ապրիլի 7-ը հռչակվեց Մայրության ու գեղեցության օր: 2001-ից մարտի 8-ը կրկին վերականգնվեց պետական տոնացույցում: Այդպես ծնունդ առավ կանանց միամսյակը մարտի 8-ից մինչեւ ապրիլի 7-ը:

Ինչեւէ, մարզկենտրոնի մշակույթի պալատում տոնական տրամադրություն էր, նախ հրապարակվեց Կապանի համայնքի ղեկավարի շնորհավորանքի խոսքը տոնի առթիվ:

Այնուհետեւ հերթը հասավ պարգեւատրումներին:

Համայնքում նշանակալի դեր ունեցած կանայք՝ Կապանում բնակվող Հայրենական մեծ պատերազմի միակ կին վետերան Քնարիկ Հայրապետյանը, մոտ մեկ տարի առաջ համայնքում ծնված եռյակի մայր Օֆելյա Առաքելյանը, հինգ երեխայի մայր Վերոնիկա Գոլիկովան (Կապանի համայնքի Տավրոս բնակավայրից), երկարամյա մանկավարժ, կենսաթոշակառու Էմմա Քարամյանը, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Կապանի մասնաճյուղի սոցիալական աշխատող Լենա Մուշկամբարյանն արժանացան դրամական պարգևների: Կրթության, առողջապահության, տեղական ինքնակառավարման ոլորտների մի խումբ կանայք պարգեւատրվեցին համայնքի ղեկավարի շնորհակալագրով եւ դրամական պարգեւով բարեխիղճ աշխատանքի համար:

Այնուհետեւ հանդիսության մասնակիցների համար տրվեց համերգ: Հայ եւ արտասահմանցի կոմպոզիտորների երգերի կատարումով հանդես եկան Վարշամ Ավագյանը, Վանուշ Հակոբյանը, Մելինե Խաչատրյանը, Գաբրիելը, Ինգա Մանուչարյանը (նվագակցողներ՝ Դավիթ Բաղդասարյան եւ Արթուր Դավթյան), պարային կատարումներով՝ «Պարի աստղեր» շոու ստուդիայի սաները (ղեկավար՝ Էրիկ Քոչարյան), «Նարին» (ղեկավար՝ Նարինե Մովսիսյան) պարային համույթը: Համերգը եզրափակվեց Ալեքսեյ Հեքիմյանի «Դռները բացեք, գարուն է գալիս» երգով (խոսք՝ Համո Սահյանի):

Հանդիսության ավարտին կանանց ու աղջիկներին ծաղիկներ հանձնվեցին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Լույսը՝ ափի մեջ

Եվ.... Լուսավոր կետը երեւաց: Եվ կետն այդ կդառնա Կարախանյան ընտանիքի երազած փոփոխության մեկնարկը: Իսկ ընտանիքը բազում դժվարությունների միջով է անցել: Ընտանիքի հայրը՝ Պետրոսը, մեն մենակ մեծացրել է վեց երեխա: Եվ հիմա լույսի շողը նրա ձեռքերում է՝ բնակարանի բանալու տեսքով. հիմա ընտանիքը կապրի արժանապատիվ կյանքով, ընտանիքի յուրաքանչյուր անդամ իրեն մարդ կզգա ու իրեն հասարակության լիիրավ անդամ կհամարի: Բնակարանի մուտքը զարդարված է տոնականորեն, կարմիր ժապավենը պիտի կտրվի: Այդ իրավունքը տրվել է երեխաներից մեկին՝ Ջուլիետային:

**- Աստծո օրհնությամբ այս տունը կշենանա, ընտանիքը կապրի խաղաղ, համերաշխ: Շնորհակալություն այն անձանց, կազմակերպություններին, ովքեր այս նպատակի համար աշխատեցին ու երջանկացրին մարդկանց:**

Իսկ ուրախությունն ընտանիքին պարգեւել հաջողվեց Ucom հիմնադրամի ու Վորլդ Վիժն Հայաստան ծրագրի համատեղ ջանքերով իրականացվող «Պահենք երեխաներին ընտանիքում» բարեգործական նախագծի շնորհիվ: Եվ 27 տարի անց Սիսիան համայնքի Շաղատ բնակավայրի Կարախանյանների ընտանիքը վերջապես ունեցավ իր տունը, որ գնվել է Վորլդ Վիժն Հայաստանի եւ Ucom ընկերության արդյունավետ համագործակցության շնորհիվ ու կահավորվել Վորլդ Վիժնի աջակցությամբ: Իսկ ընտանիքը մեկ տարի է, ինչ ընդգրկված է Վորլդ Վիժնի «Աղքատության նվազեցման եւ փուլային զարգացման» ծրագրում:

**- Այսօր Ucom-ի բաժանորդները չափազանց բարի գործ իրականացրին իրենց կողմից ուղարկված sms-ի հանգանակությունների շնորհիվ: Հազարավոր սրտացավ բաժանորդների ջանքերով Կարախանյաններն իրենց Ամանորը կդիմավորեն տաք, ջերմ, լուսավոր ընտանեկան միջավայրում,-ասում է ընկերության գործադիր տնօրենը:**

Իսկ Վորլդ Վիժն Հայաստան ծրագրի տնօրեն Ժիրայր Էդիլյանը հետեւյալն է շեշտադրում.

**- Ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքների հետ աշխատանքում ամենակարեւորն այն է, որ նյութական աջակցությանը զուգահեռ պետք է զարգացնել նաեւ ինքնուրույն կյանք վարելու հմտությունները, որպեսզի ընտանիքը կարողանա արժանապատվորեն ապրել առանց արտաքին միջամտության: Մեր կազմակերպությունը կշարունակի աշխատել Կարախանյանների հետ, Պետրոսն արդեն աշնանացան է կատարել, նրան կսովորեցնենք նաեւ այլ հմտություններ, որպեսզի կարողանա լավ բերք ստանալ:**

Ի դեպ, «Պահենք երեխաներին ընտանիքում» համատեղ ծրագրի շրջանակում Ucom-ի բաժանորդներն ամեն ամիս նվիրաբերել են 200 կամ 500 դրամ՝ sms ուղարկելով 1234 կամ 5678 կարճ համարներին: Իսկ ամսվա վերջում Ucom-ը կրկնապատկել է ամսվա ընթացքում հավաքված գումարը եւ ուղղել ծրագրի իրականացմանը:

Իսկ հիմա ընտանիքը հարմարավետ տեղավորվել է նոր բնակարանում:

- Երեխաներից քանի՞սն է աղջիկ, քանիսը՝ տղա, - հարցնում եմ ընտանիքին:

Ջուլիետան մեծերից առաջ է ընկնում:

- Չորս տղա եւ երեք աղջիկ:

- Չորս չէ, երեք տղա, - նրան իբր ուղղում է մեծ քույրը՝ Հեղինեն: - Արթուրը, Արմենը եւ Ռազմիկը:

- Բա պապա՞ն, - ասում է Ջուլիետան:

Ներկաները լիաթոք ծիծաղում են…

- Որ դպրոցն ավարտես, ի՞նչ ես դառնալու, - հարցնում եմ Ջուլիետային, ով 5-րդ դասարանում է սովորում:

- Ոստիկան:

- Ինչո՞ւ:

- Որ գողերին ու մարդասպաններին բռնեմ ու այնպես կանեմ, որ ոչ մեկը գողություն չանի, որ ոչ մի մարդ չսպանի մարդուն, այլ օգնի նրան:

Իսկ բարեմաղթանքները շարունակվում են: Այն նաեւ դասընկերների կողմից է:

Վարդանն ասում է.

- Ռազմիկը ե՛ւ ընկերս է, ե՛ւ դասընկերս: Ցանկանում եմ, որ նրանք այս տանն առողջ ու երջանիկ ապրեն:

- Այդքա՞նը:

- Բոլ չի՞, - մանկան անմիջականությամբ ասում է Վարդանը: Եվ տունը կրկին լցվում է ծիծաղով:

Այս ընտանիքին օգնության ձեռք է մեկնել նաեւ անգլիացի բարերար Իվան Դենիսոն՝ նվիրելով գազօջախ, լվացքի ժամանակակից մեքենա, սառնարան, կահույք, մահճակալներ, սեղան-աթոռներ ու նաեւ 500 դոլար գումար՝ որպես ջեռուցման վարձ:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

# «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի մեկնարկը՝ հուլիսի 7-ին

Մարտի 7-ին Սյունիք այցելած ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին ուղեկցում էր նաեւ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը:

Նախարար Արմեն Ամիրյանը փոխնախարար Արթուր Պողոսյանի հետ եղել է նաեւ Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, ծանոթացել թատրոնի շենքի վերանորոգման ընթացքին եւ թե ինչպես է թատրոնը նախապատրաստվում «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի միջոցառումներին:

Մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը Գորիսում վարչապետ Կարեն Կարապետյանին ներկայացրել է «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագիրը:

Միջոցառումները կմեկնարկեն հուլիսի 7-ին եւ կշարունակվեն մինչեւ ուշ աշուն:

**Սեփ. լրատվություն**

# ՀՀ առողջապահության նախարարությունը ներկայացրել է դեղերի դեղափոմսով բաց թողնմանն անցնելու ժամանակացույցը

ԵՐԵՎԱՆ, 6 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի Հանրապետության կառավարության նիստում ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402-Ն որոշման գործողությունը մասնակի կասեցնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից՝ հավելելով. **«Կառավարության որոշմամբ սահմանվել է դեղերի դեղատոմսով բաց թողնման հստակ ժամանակացույց. հակավարակային (հակաբակտերիային դեղեր, հակասնկային դեղեր, հակամիկոբակտերիային դեղեր, հակավիրուսային դեղեր, իմունային շիճուկներ եւ իմունոգլոբուլիններ, պատվաստանյութեր) դեղերը բաց են թողնվելու դեղատոմսով 2018 թվականի մարտի 1-ից, ներարկման համար նախատեսված դեղերը՝ 2018 թվականի հուլիսի 1-ից, բոլոր այն դեղերը, որոնք Հայաստանի Հանրապետությունում գրանցված են որպես դեղատոմսով բաց թողնվող դեղեր, դեղատոմսով բաց կթողնվեն 2018 թվականի հոկտեմբերի 1-ից»:**

# Խոսուն վավերագրեր՝ խոսուն ժամանակների մասին

Գորիսի երկրագիտական թանգարանում բացված ցուցադրանքը նվիրված էր Արցախյան շարժման 30-ամյակին: Իսկ այն «Միասնության դասեր» թեմայով միջոցառման տարրերից մեկն էր: Պատերին լուսանկարներ են, որ հիմա պատմական արժեք ունեն: Դրանցից յուրաքանչյուրը պատմում է 30 տարի առաջ մեր քաղաքի մասին, որի զավակներն արցախցիների հետ միասին ոտքի ելան ու մասնակցեցին պատմական արդարությունը վերականգնելու համար մղվող պայքարին: Այդ լուսանկարների հեղինակներից են Ժիրայր Մարտիրոսյանը, Ռուդիկ Խոջաբաղյանը, այլք: Այդ լուսանկարներում պարզորոշ երեւում է ժամանակի ռիթմը, ժամանակի հորձանքի թափը: Իսկ պայքարին սկզբից մասնակցեցին մի քանի ֆանատիկներ, որովհետեւ հեշտ չէր 70 տարվա լեթարգիական քնից արթնացնել մասսաներին՝ այն էլ հզոր մի պետության եւ նրա պահապանների քթի տակ: Մասսաների մոտ դեռ հավատ կար՝ խաղաղ ճանապարհով լուծել Արցախի հարցը: Դրա համար էլ նրանք մասնակցեցին ստորագրահավաքին՝ հարցին արագ ընթացք տալու համար: Ահա խունացած մի փաստաթուղթ՝ «Մենք ուզում ենք, որ ԼՂ մարզը միանա Հայաստանին»: Դրա տակ կա 17 աշակերտի ստորագրություն, նրանք Տեղ գյուղի 2-րդ դասարանի աշակերտներն են: Կան նաեւ այլ փաստաթղթեր՝ «Մենք ձեզ հետ ենք՝ Ղարաբաղի պիոներներ»: Այս փաստաթղթերը խոսում են այն մասին, որ նույնիսկ երեխաներն են արթնացել, կանգնել ծնողների կողքին: Իսկ այս մյուս փաստաթղթերը խոսում են հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողների խնդրանքների մասին, որ նրանք ուղարկել են Հայաստանի կոմկուս՝ Երեւան, Բաղրամյան 19, ՀՀ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե՝ «Խնդրում ենք ձեզ արագ որոշել Ղարաբաղի ինքնորոշման հարցը»:

Այս փաստաթղթով էլ ազդարարվում է Գորիսում նախաձեռնող խմբի ստեղծման մասին՝

**«Հարգելի հայրենակիցներ, Երեւանի «Ղարաբաղ» կոմիտեի իմացությամբ Գորիսում ստեղծվել է նախաձեռնող խումբ: Նախաձեռնող խումբն ամեն ինչ անելու է, որ Գորիսում ցույցերն անցնեն նախատեսված կարգով: Խմբի նախաձեռնությամբ ստեղծվել է Երեւանի «Ղարաբաղ» կոմիտեի Գորիսի մասնաճյուղ...»:** Եվ անուններ՝ Տիգրան, Ժիրայր, Անդրանիկ, Խաչիկ, էդիկ Զ. եւ ուրիշներ: Այն ուներ նաեւ իր կանոնակարգը, որում կար նաեւ ոստիկանությանն ուղղված կետ՝ «Խնդրում ենք չնեղել ցույցի մասնակիցներին»»:

«Միասնության դասեր» միջոցառմանը լուսանկարներից, փաստաթղթերից բացի մասնակիցների համար պատրաստվել էր նաեւ մի այլ հետաքրքիր անակնկալ. ցուցադրվում էր Ռուդիկ Խոջաբաղյանի պատրաստած ֆիլմը: Արցախյան շարժման հենց առաջին օրերից Ռուդիկ Խոջաբաղյանը լուսանկարչական ապարատն ու տեսախցիկը ձեռքին ամենուր էր՝ Երեւանում, Գորիսում, խրամատներում: Ականատեսի աչքերով նա նկարահանել է Գորիսի զարթոնքը, մարտադաշտ մեկնող ֆիդայիներին: Ահա կադրերը պատմում են նաեւ Արցախին սննդով, հագուստով օգնելու պահը. մեծ ու փոքր, կին թե տղամարդ սննդի, հագուստի արկղներով ու տոպրակներով «բեռնավորված» հրապարակում են եւ առաջին բեռնատարն ուղեւորվում է Արցախ, հետո երկրորդը, երրորդը... Այդքանով չի ավարտվում Գորիսեցիների օգնությունն Արցախին. ազգային մարաթոն է, ընտանիքներով, գերդաստաններով, կոլեկտիվներով փող են նվիրաբերում Արցախի պաշտպանությանը:

Ժամանակը տեսաերիզների որակի վրա բացասական ազդեցություն է թողել: Դրանք բոլորիս պատմությունն են, հետեւաբար, տեսաերիզներում գտնվող նյութերի թվայնացումն ինչ-որ չափով կբարձրացնի դրանց որակը: Դրա համար ֆինանսներ են պետք: Իսկ ինչպես ժողովուրդը կասի, այդ տեսաերիզները ոսկու արժեք ունեն: Գուցե գտնվի Գորիսի պատմության այդ էջերը կործանումից փրկող որեւէ մեկը եւ հանձն առնի այդ նյութերը թվայնացնելու գործը:

Ռուդիկ Խոջաբաղյանը Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից արժանանում է շնորհակալագրի:

Միջոցառմանը ներկա եւ այն օրերի մասնակից Ժիրայր Մարտիրոսյանը, Սեւադա Խոջաբաղյանը, Խաչիկ Հայրապետյանը, ինչպես նաեւ միջոցառման կազմակերպիչ, Սկ. Բակունցի տուն թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը պատմեցին Արցախյան շարժման մասին, ներկայացրին այն օրերի քրոնիկոնը: Իսկ համայնքապետարանի աշխատակից Արմինե Հովակիմյանի կարծիքով այս միջոցառումն անհրաժեշտություն էր եւ այն դաստիարակչական նշանակություն ունի:

Ու այն նաեւ մի գեղեցիկ վավերագիր էր անցյալ դարի 80-ականների սերնդի ու ժամանակի պատմության մասին:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

# «Գորիս» ՔԿՀ նախկին պետին ԱԱԾ են կանչել. նոր զարգացումներ թմրանյութի գործով

Գորիսի ՔԿՀ արդեն նախկին պետ Արտուշ Մաքունցը թմրանյութի ապօրինի շրջանառության փաստի առթիվ հարուցված քրեական գործով հարցաքննվել է ԱԱԾ-ում, այնուհետեւ՝ ՀՔԾ-ում: Ինչպես հայտնի է՝ ԱԱԾ-ն բացահայտել էր Գորիսի քրեակատարողական հիմնարկում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպք: Այս իրավիճակում զարմանալի է մեկ բան, թե ուր էր նայում Գորիսի քրեակատարողական հիմնարկի պետ Արտուշ Մաքունցը, երբ իր ղեկավարությամբ գործող հիմնարկում նման իրավիճակ է տիրել:

**armlur.am**
**06.03.2018**

# «Գորիս» ՔԿՀ-ում տեղի ունեցած անկարգություններին մասնակցելու համար

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործով ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ պարզելու ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում տեղի ունեցած անկարգություններին անմիջական մասնակցություն ունեցած անձանց ինքնությունը, անհատականացնելու նրանց գործողությունները: Մեղադրանք է առաջադրվել երեք դատապարտյալի:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում զանգվածային անկարգությունները տեղի են ունեցել 2017թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում:

Նախնական քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ դեպքի օրը ՀՀ ԱԱԾ եւ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության աշխատակիցների կողմից ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի մի քանի խցերում, սահմանված կարգով, կատարվել են խուզարկություններ, որից հետո խցից դուրս են հանել ՔԿՀ-ի դատապարտված եւ կալանավորված անձանց շրջանում հեղինակություն վայելող Կ.Հովհաննիսյանին՝ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու նպատակով:

Նշված տեղափոխությանը խոչընդոտելու նպատակով մի շարք կալանավորված եւ դատապարտված անձինք հրահրել են անկարգություններ՝ հայհոյել, սպառնալիքներ հնչեցրել իրավապահ եւ արդարադատության համակարգի ծառայողների հասցեին, ոտքերով եւ տարբեր առարկաներով հարվածել խցերի դռներին եւ կերակրադռնակներին, այրված անկողնային պարագաներ եւ կենցաղային այլ իրեր նետել խցերի կերակրադռնակներից եւ պատուհաններից: Անկարգությունների հետեւանքով վնասվել է ՔԿՀ-ի գույքը:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի 3 դատապարտյալի մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ անկարգություններին մասնակցելու համար:

ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում շարունակվում է անկարգությունների դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը, իրականացվում են անհրաժեշտ քննչական եւ դատավարական այլ գործողություններ՝ մասնակիցների ամբողջական շրջանակը պարզելու ուղղությամբ:

**investigative.am**
**02.03.2018**

# «Մեղրի» ՀԷԿ-ի գործարկման հեփաձգման մեղավորը մենք չենք՝ ՀՀ-ում Իրանի դեսպան

Մեղրու ՀԷԿ-ի գործարկման ուշացումը մեր կողմից չի եղել. ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին լրագրողների հետ զրույցում այսպես պատասխանեց Tert.am-ի հարցմանը, թե ինչո՞ւ է անընդհատ հետաձգվում Հայաստանի եւ Իրանի միջեւ ձեռք բերված «Մեղրի» ՀԷԿ-ի գործարկման համաձայնությունը:

**«Մեղրու ՀԷԿ-ը հունվարի վերջին պետք է գործարկվեր: Առաջիկայում Իրանից պետք է պատվիրակություն այցելի Հայաստան, որ փորձի նաեւ այս ծրագիը վերջնական տեսքի բերել: Ուշացման պատճառը մենք չենք եղել,- ասաց նա՝ հավելելով, որ մեղավորն ընկերություններն են՝ Հայաստանի կառավարությունն էլ մեղավոր չէ,- կառավարությունները միշտ լավ աշխատում են»:**

Խոսելով արդեն Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման հնարավորության մասին՝ դեսպանը նշեց. **«Իրանի հարաբերությունները Հայաստանի հետ շատ լավ են, մենք պատրաստ ենք գործարկել երկաթգիծը:**

**Հայկական կողմը պետք է աշխատի ներդրող կողմին ներկայացնել: Մենք պատրաստ ենք համագործակցել նաեւ Հյուսիս-հարավ մայրուղու ծրագրերի հետ կապված: Պարզապես պետք է համատեղ ներդրումներ իրականացնել այս ոլորտներում: Դուք առաջ եկեք, մենք հաջորդ քայլը կանենք»,-** ասաց նա:

**tert.am**
**12.02.18**

## «Հյուսիս-հարավ միջանցքի» հարավային հատվածի ճանապարհի կառուցմամբ հետաքրքրված ընկերություններ կան

ԵՐԵՎԱՆ, 6 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հյուսիս-հարավ միջանցքի» հարավային հատվածի ճանապարհի շինարարության ֆինանսավորմամբ հետաքրքրված մասնավոր ընկերություններ կան:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին լրագրողների հետ զրույցում հայտնեց ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը: Նրա խոսքով՝ մոտ ապագայում կհայտարարեն նրանց մասին: **«Հյուսիս-հարավ ճանապարհն արագ տեմպերով շարունակվում է կառուցվել, 2019-ի վերջին նախատեսում ենք ունենալ մինչեւ Գյումրի հատվածը: Հիմա նախագծային աշխատանքներն են ընթանում Գյումրի-Բավրա եւ դեպի հարավային հատված ճանապարհի շարունակության առնչությամբ: Բանակցություններ ենք վարում տարբեր ներդրողների հետ հարավային հատվածում ֆինանսական ներդրումներ կատարելու ուղղությամբ: Մոտ ապագայում կհայտարարենք դրա մասին»,-**հայտնեց նախարար Մարտիրոսյանը:

Մարտի 5-6-ին Երեւանում անցկացվեց «Եվրոպա-Կովկաս-Ասիա» միջազգային տրանսպորտային միջանցքի (ՏՐԱՍԵԿԱ) միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստը: Հայաստանը տարածաշրջանում տրանսպորտային ենթակառուցվածքների շարունակաբար բարելավման ծրագրերից խոշորագույնը համարում է «Հյուսիս-հարավ միջանցքի» շինարարությունը: Տրանսպորտային հաղորդակցության տեսանկյունից կարեւորվում են նաեւ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ավտոճանապարհի արդեն մեկնարկած հիմնանորոգման եւ կենսական նշանակության բարելավման մյուս ծրագրերը:

# Հեռացող վարչապետը Սյունիքում քաջություն չունեցավ բարձրացնել եռացող կաթսայի կափարիչը եւ առերեսվել իրականության հետ

էջ 1

միջոցառումների արդյունքներին ու 2018թ. անելիքներին:

Սակայն վարչապետի այցը, ինչպես եւ ենթադրվում էր, սյունիքյան հանրությանը գրեթե չհետաքրքրեց: Հատուկենտ էին մարդիկ, ովքեր նշանակություն տվեցին կառավարության ղեկավարի այցին:

**Ինչո՞ւ էր սյունեցին հիասթափվել հանրապետության վարչապետից, ինչո՞ւ էր Կարեն Կարապետյանն անցանկալի ու չսպասված անձի կարգավիճակ ձեռք բերել մարզում:**

Պատճառը, անկասկած, այն չէր, որ վարչապետը գրեթե նժույգից իջածի կարգավիճակում է այլեւս, որ պետական-քաղաքական գործչի նրա կարիերան իրիկնաժամ է ապրում:

Հիասթափվելու համար, հավատացեք, սյունեցին ծանրակշիռ պատճառներ ուներ:

Անկախության տարիներին հանրապետության ոչ մի վարչապետ այդքան չի այցելել Սյունիք, բայց ոչ մի վարչապետի այցելություններ այդքան ձեւական ու անարդյունք չեն եղել, որքան Կարեն Կարապետյանինը:

Բազում խոստումներ տվեց, բայց ոչ մեկը կյանքի չկոչեց. պատկերացնել կարելի է, թե որքան բարգավաճ կլիներ Սյունիքը, եթե իրականացվեր վարչապետի խոստումների գոնե 5-10 տոկոսը:

Հանրապետության ոչ մի ղեկավար այդքան էֆեկտիվ չկազմալուծեց Սյունիքի մարզպետարանի գործունեությունը, որքան ինքը մեկուկես տարվա ընթացքում:

Երեւանից մարզ այցելած բարձր իշխանավորներից եւ ոչ մեկն այնքան կտրված չէր իրականությունից, որքան Կարեն Կարապետյանը:

Հանրապետության բարձր իշխանավորներից քչերն են այդքան բացահայտ ու հետեւողական քաջալերել Սյունիքի մարզպետի անբանությունը եւ աչք փակել նրա չարագործությունների վրա, ինչպես Կարեն Կարապետյանը:

Մարզում ոմանց մեջ նույնիսկ տպավորություն է ձեւավորվել, որ սյունիքյան գործերին միջամտելը վարչապետի իրական լիազորություններից դուրս է, որ Սյունիքը նրա համար միայն լուսանկարվելու եւ ինչ-որ պատրանքներ մանրագործելու վայր է:

Ահա թե ինչու էր վարչապետ Կարեն Կարապետյանը վաստակել անցանկալի անձի կարգավիճակ Լեռնահայաստանում:

***

Ապրիլի 9-ին, համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության, Կարեն Կարապետյանի կառավարությունը վայր կդնի իր լիազորությունները:

Քաղաքական ապագայի առումով անորոշության մեջ հայտնված, իրիկնաժամ ապրող վարչապետը, այդուհանդերձ, այցելեց Սյունիք:

Առաջին հայացքից դրանում տարօրինակ ոչինչ չկա. 2017-ի արդյունքներն ամփոփելու եւ ընթացիկ տարվա ծրագրերը քննարկելու համար նա այցելել է բոլոր մարզեր, ինչո՞ւ չպետք է այցելեր նաեւ Սյունիք:

Մինչդեռ, ըստ հազարավոր սյունեցիների, մարզում ստեղծված բարոյահոգեբանական ամոթալի իրավիճակում վարչապետն առնվազն պետք է հրաժարվեր Սյունիք այցելելուց ու Վահե Հակոբյանի հետ նույն սեղանի շուրջ նստելուց. դա էին պահանջում տարրական բարոյականությունը, երկրամասի բնակչության հանդեպ վարչապետի պետական հանձնառությունը եւ, ի վերջո, նրա մարդկային ու քաղաքացիական պարտքը:

Մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորությունն ամիսներ շարունակ աղմկահարույց պատմությունների կիզակետում է, ամիսներ շարունակ գործում է ընդդեմ Հայաստանի Հանրապետության… Եվ, չնայած դրան, հանրապետության վարչապետը շարունակում է նրա հետ պետական հարցեր քննարկելու երեւութականություն ստեղծել:

Իսկ եթե, այդ բոլորով հանդերձ, վարչապետը նպատակահարմար է գտել նույն ձեւաչափով (ինչպես մյուս մարզերի դեպքում) գալ Սյունիք եւ լսել մարզպետի հաշվետվությունը, ապա պետք է քաջություն ունենար եւ գոնե բարձրացներ եռացող կաթսայի կափարիչն ու առերեսվեր իրականության հետ: Ինքը, սակայն, ոչ միայն դա չարեց, այլեւ չգիտակցեց նույնիսկ, որ դրանով յուղ է լցնում կրակի վրա, ավելի խաթարում քաղաքացիական համերաշխությունը երկրամասում:

Մյուս կողմից՝ Կարեն Կարապետյանն այդպես էլ չհասկացավ, որ այցելություն կատարել մարզ՝ դա մեքենաների շարասյունով եւ ուղեկցող չինովնիկների բազմությամբ Սյունիք գալն ու ինչ-որ սենյակում իր իսկ փառաբանության բեմադրություն կազմակերպելը չէ: Այցելել մարզ՝ նշանակում է նախեւառաջ հանդիպել մարդկանց հետ, խորանալ բնակչության մտահոգությունների, մարզի հիմնախնդիրների մեջ: Թե չէ կարելի էր սեփական քաղաքական հավակնությունները «հիմնավորող» թվեր շաղ տալ նաեւ Երեւանից, կարելի էր Վահե Հակոբյան քաղաքական ննջեցյալի հուղարկավորության (մի քանի օրով կամ շաբաթով) հետաձգումն ուղղորդել նաեւ Երեւանից:

***

Վարչապետի պաշտոնում վերջին անգամ այցելելով Սյունիք, Կարեն Կարապետյանը գոնե պետք է հաշվետվություն տար բնակչությանը՝ Սյունիքում իր կառավարության իրականացրած տարածքային քաղաքականության, սյունեցիներին տված խոստումների կատարման արդյունքների կամ ընթացքի մասին:

Դա, խոստովանենք, նաեւ բարոյականության ու պատասխանատվության հարց է: Չէ՞ որ մինչեւ մարտի 7-ը չորս անգամ պաշտոնական այցով, դրնգդրնգոցով, հարայհրոցով ժամանել է Սյունիք եւ անթիվ-անհամար խոստումներ տվել. 4 նոյեմբերի 2016թ., 12 մարտի 2017թ., 29 հուլիսի 2017թ., 15 դեկտեմբերի 2017թ.:

Դե, եթե ինքը խուսափում է կամ ամաչում է իր անկատար խոստումների մասին խոսել, գոնե մենք հիշեցնենք նրանցից մի քանիսը՝ ակնկալելով պատասխան:

Մարզի հինգ քաղաքում ստեղծվելու են վթարավերականգնողական ծառայություններ՝ նոր աշխատատեղերով:

Կապանում հիմնվելու է ռետինե նյութերի վերամշակման եւ խողովակների արտադրության երկու գործարան՝ նոր աշխատատեղերով:

Օժանդակություն է տրվելու հաջողակ եւ ներուժ ունեցող ֆերմերներին:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի շրջանակներում, վեց ռազմավարական ուղղությամբ, 95 մլն դոլարի ներդրում է կատարվելու «Տաթեւի դարպասներ» կառուցվելիք համալիրում, որի շնորհիվ ստեղծվելու է 1500 աշխատատեղ, իսկ Տաթեւ այցելող զբոսաշրջիկների թիվը տարեկան հասնելու է 400 հազարի:

Մարզի անասնապահությունն ու գյուղատնտեսությունն ուղղվելու են դեպի իրական շուկա:

2017-ին Սյունիքի մարզում նախատեսվում են 55 մլն դոլարի ներդրումային ծրագրեր տարբեր ոլորտներում:

Իրանի հետ մեր առեւտրաշրջանառությունը տարեկան 50-57 մլն դոլար է՝ առանց էներգետիկ ոլորտի, այդ թիվը հասցվելու է 1 մլրդ դոլարի:

Ներդրումներ են արվելու մարզի առողջապահական հիմնարկներում:

Կլուծվի մարզն ամբողջությամբ գյուղտեխնիկայով ապահովելու խնդիրը:

Գրեթե բոլոր այցելությունների ընթացքում խոսել է Մեղրու ազատ տնտեսական գոտու մասին: Սկզբում հայտարարվել է, որ ազատ տնտեսական գոտին կգործի 2017թ. հոկտեմբերի 1-ից, որ այնտեղ կհիմնվի 2500 աշխատատեղ: Հետո հայտարարվել է՝ ազատ տնտեսական գոտին կկառուցվի երկու փուլով. առաջին փուլն ավարտվել է 2017թ. դեկտեմբերի 15-ին: Ավելի ուշ սրբագրվել է՝ կստեղծվի ոչ թե 2500, այլ 2000 աշխատատեղ, մի փոքր ուշացումով էլ ճշտվել է՝ կստեղծվի 1500 աշխատատեղ:

Ազատ տնտեսական գոտում կընդգրկվի 50-70 շահագործող ընկերություն, որոնք կիրականացնեն 100-130 մլն դոլարի ներդրում՝ տարեկան ապահովելով 250 մլն դոլարի ապրանք կամ ծառայություն:

Գրեթե բոլոր այցելությունների ընթացքում խոսել է Կապանի օդակայանի վերագործարկման եւ այդ նպատակով կատարվող ներդրումների մասին: Հայտարարվել է 2017թ. օդակայանում 2.5 մլն դոլարի ներդրման մասին (Միջանկյալ ասենք՝ մեկուկես տարվա ընթացքում ավարտին չի հասցվել սովորական մի սպասասրահի կառուցումը, որի վրա մինչեւ այժմ հազիվ թե կատարված լինի մի քանի տասնյակ հազար դոլարի ներդրում: Եվ այդքանից հետո հայտարարվում է՝ 2018-ին օդակայանում կներդրվի 4.5 մլրդ դրամ):

Չենք ուզում վարչապետի խոստում-հավաստիացումներից յուրաքանչյուրի կատարողականի մեջ խորանալ՝ թողնելով դա պարոն Կարապետյանին: Ընդ որում՝ ասվածը միայն խոստումների մի մասն է:

Ոչինչ, որ Սյունիքում ամաչել-խուսափել է անդրադառնալ իր խոստումների կատարմանը: Գոնե Երեւանից, գոնե ուշացումով, գոնե իր զբաղեցրած աթոռն ու անձը հարգելով, կարծում ենք, Կարեն Կարապետյանը պետք է հաշվետվություն տա, թե սյունիքյան խոստումներից որ մեկն է կատարել կամ չկատարել:

Հակառակ դեպքում (Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնի հանդեպ մեծագույն հարգանք ունենալով հանդերձ) ստիպված կլինենք եզրակացնել՝ վարչապետը խաբել է սյունեցիներիս կամ ոչ իրատեսական, չհաշվարկված խոստումներ է տվել մարդկանց…

***

Մարտի 7-ին մարզ այցելած Կարեն Կարապետյանը, Վահե Հակոբյան քաղաքական ննջեցյալ մարզպետի ձեռքից բռնած, նոր խոստումներ տվեց սյունեցիներին:

Ահա՝ 2018-ին մարզում նախատեսվում է 52.2 մլրդ դրամի ներդրում:

Կստեղծվի 1077 ոչ գյուղատնտեսական աշխատատեղ:

Կապանի օդակայանում նախատեսվում է 4.5 մլրդ դրամի ներդրում:

2018-ին Լեռնաձոր բնակավայրում կգործի տրիկոտաժի ֆաբրիկա՝ 100 աշխատատեղով:

2018-ին 4.3 մլն դոլարի ներդրում կկատարվի Խնձորեսկում եւ կստեղծվի 100 աշխատատեղ:

Տաթեւ համայնքում ներդրվելու է 1.7 մլն դոլար, որից 1 միլիոնը՝ 2018-ին՝ ստեղծելով 40 աշխատատեղ:

2018-ին մարզում կստեղծվի երեք սպասդանոց:

2018-ին ինտենսիվ այգիների մակերեսը կավելանա 45 հա-ով:

Գյուղատնտեսության ոլորտում 2018-ին նախատեսվում է 1.2 մլրդ դրամի ներդրում եւ 500 աշխատատեղի ստեղծում:

Մեղրու տարածաշրջանում ջրամբարի կառուցում (ծրագրի նախնական արժեքը՝ 2.5 մլն դոլար):

2018-ին մարզի առողջապահական ոլորտում վճարովի ծառայություններից՝ 482 մլն դրամ մուտք (19.7 տոկոս աճ 2017-ի համեմատ):

Գորիսի հիվանդանոցում՝ հնվազիվ կարդիոլոգիայի բաժանմունք:

… Մի պահ ընդունենք, որ վարչապետն ու մարզպետն այս անգամ չեն խաբում, բայց…

Մոտ մեկ ամիս հետո հանրապետությունն ունենալու է նոր վարչապետ, նոր կառավարություն՝ միագամայն նոր ծրագրով ու ռազմավարությամբ:

Չնայած դրան, մայրամուտ ապրող վարչապետն ու չեղած մարզպետը խոստումներ են տալիս:

Արդյո՞ք կոռեկտ ու ողջամիտ է այդ գործելակերպը, մանավանդ որ իրենց թռիչքի ու վերելքի օրերում նրանց տված խոստումները չեն կատարվել:

Ներող եղեք, բայց մի տեսակ մանկական խաղի տպավորություն է թողնում այդ ամենը: Մի տարի հետո էլ կասեն՝ դե ինքը վարչապետ չի եղել, Վահե Հակոբյանն էլ Հայաստանից փախել է, դրա համար էլ խոստումները չեն կատարվել, թող նոր վարչապետն ու նոր մարզպետը կատարեին:

Այսինքը՝ կարեւորն այս պահին մարդկանց խոստումներով կերակրելն է, Սյունիքով մտահոգ վարչապետի եւ մարզպետի կենդանության մասին պատրանք ստեղծելը, իսկ հետո…

Տա Աստված, որ սխալ լինենք մեր դիտարկումների մեջ:

***

Անկեղծորեն ու ափսոսանքով խոստովանենք՝ վարչապետի սյունիքյան վերջին այցից ու մարզպետի ելույթը լսելուց հետո մարզի իրական կացության մասին շատերիս պատկերացումներում շիլաշփոթն ավելի խորացավ:

Ընդամենը մի քանի օրինակ, որոնք, ցավոք, ավելի են աղավաղում եւ ոչ ստույգ դարձնում պատկերը:

Նախ՝ Սյունիք-Իրան հարաբերությունների մասին, որը, ըստ վարչապետի, մեր «ֆիշկաներից» մեկն է:

Ոչինչ, որ մեկ տարի առաջ տված խոստումը՝ մարզում արտադրվող բրդի իրացման խնդիրն Իրանում լուծելու վերաբերյալ, չի կատարվել:

Ոչինչ, որ հայ-իրանական առեւտրաշրջանառությունը 2017-ի համեմատ չի ավելացել, թեեւ վարչապետը խոստացել էր տարեկան (առանց էներգետիկայի) 50-57 մլն դոլարի հասնող առեւտրաշրջանառությունը հասցնել 1 մլրդ դոլարի:

Ո՞ւր մնաց «ֆիշկան»…

Խոսում ենք Մեղրու ազատ տնտեսական գոտու մասին, բայց շրջանցում իրողությունը, որ Մեղրիում թղթի վրա մի ազատ գոտի էլ ստեղծվել էր վարչապետ Հովիկ Աբրահամյանի ժամանակ, որ Մեղրիում թղթի վրա մի սահմանամերձ շուկա էլ ստեղծվել էր լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օրերում:

Գոնե այս մեկը չմնա թղթի վրա…

Մարտի 7-ի գորիսյան խորհրդակցությունում պատկառելի տեղ հատկացվեց (միայն խոսքերով) գյուղատնտեսությանն ու գյուղապահպանությանը, բայց ոչ մի բառ այն մասին, որ իր վարչապետության

# «Սյունիքի մարզի «ֆիշկաներից» մեկն Իրանի շուկային մոտ լինելն է».

## *Կարեն Կարապետյանը մարզային խորհրդակցություն է անցկացրել Գորիսում*

էջ 1

2018 թ. նախատեսվում է ունենալ մոտ 70 աշխատատեղ: Ներդրվել է 500 հազ ԱՄՆ դոլար, սարքավորումները ներկրվել են Իտալիայից: Ձեռնարկությունը ստացել է «Հալալ»-ի սերտիֆիկատ, ինչը հնարավորություն է տալիս արտադրանքն արտահանել Իրան: Կապանում բացվել է մուլտի բրենդ աութլեթ խանութ. ներդրվել է 20 մլն դրամ, ստեղծվել է 10 աշխատատեղ: Մարզպետը նշել է, որ արդեն դիմել են ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեխնոլոգիաների նախարարություն, որպեսզի մրցույթ հայտարարվի Կապան-Ջուլֆա ավտոբուսային երթուղու համար, որի նպատակը Իրանի Արազ ազատ տնտեսական գոտու ներկայացուցչության հետ համագործակցության զարգացումն է: Ձեկուցվել է, որ մեկնարկել է Կապանի օդանավակայանի ուղեւորային համալիրի շինարարությունը. նախատեսվում է շուրջ 4.5 մլրդ դրամի ներդրում, 15-25 աշխատատեղի ստեղծում: Մարտի 15-ին Կապանում կբացվի գերմանական արտադրության կինոտեխնիկայով հագեցած կինոթատրոն. ներդրումների ծավալը կազմում է 140 մլն դրամ, կստեղծվի 10-15 աշխատատեղ: 2018 թ. Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրում կսկսի աշխատել մոտ 500.000 ԱՄՆ դոլար ներդրումային արժողությամբ տրիկոտաժի ֆաբրիկան (100 աշխատատեղ, արտահանման շուկան՝ Ուկրաինա):

Ջրօսաշրջության ծրագրերի շրջանակում «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել եւ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է 2018-2025 թթ. «Հին Խնձորեսկ» ներդրումային ծրագիրը՝ 25-26 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով. 2018թ. ներդրումների ծավալը 4.3 մլն ԱՄՆ դոլար է, ստեղծվելիք աշխատատեղերի թիվը՝ 100: Տաթեւ համայնքում նախատեսվում է սկսել էքստրիմ կենտրոնի շինարարություն, որը ներառելու է նաեւ զիփլայն համալիր: Ներդրումային ծրագրի արժեքը 1,7 մլն ԱՄՆ դոլար է. այն կիրականացվի 3 փուլով, յուրաքանչյուրի տեւողությունը՝ 1 տարի, կստեղծվի 130 աշխատատեղ. 2018 թ. ներդրումները կկազմեն 1 մլն ԱՄՆ դոլար, աշխատատեղերի թիվը՝ 40: Ընդհանուր առմամբ մասնավոր ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2018 թ. ակնկալվում է բիզնես ոլորտի աճ 15 տոկոսով:

Ձեկուցվել է, որ 2017 թ. համայնքային ցուցանիշները հետեւյալն են. մարզի 8 համայնքի սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը կազմել է 1,685,7 մլն դրամ՝ 2016թ. համեմատ 21,2 տոկոս ավելի: Այս տարի նախատեսվում է հավաքագրել 1902.9 մլն դրամ: Վարչապետը հանձնարարել է այլ մարզերի ցուցանիշների հետ համեմատական վերլուծություն անցկացնել՝ բազաները ճշգրտելու եւ սեփական եկամուտների կատարողականի բարձր մակարդակ ապահովելու համար:

Աղբահանության գումարների հավաքագրման ծավալը 2017 թ. կազմել է 229.4 մլն դրամ, ծախսը՝ 310.4 մլն դրամ. հավաքագրումն ընդհանուր ծախսի նկատմամբ կազմել է 74 տոկոս: 2018 թ. նախատեսվում է հավաքագրել շուրջ 284.6 մլն դրամ, ծախսը՝ 357,2 մլն դրամ. հավաքագրումն ընդհանուր ծախսի նկատմամբ՝ 80 տոկոս: 2017 թ. աղբահանության ծառայություն է մատուցվել մարզի 15 բնակավայրում, բնակչության թիվը՝ 104300 մարդ: 2018թ. նախատեսվում է բնակավայրերի թիվը հասցնել 33-ի, բնակչության թիվը՝117200-ի (մարզի բնակչության 84,5 տոկոսը): Տնտեսվարող սուբյեկտների հետ կնքվել է 1862 պայմանագիր, մինչեւ 2018 թ. մարտի վերջ նախատեսվում է ավարտին հասցնել պայմանագրերի կնքման գործընթացը՝ այդ ցուցանիշը հասցնելով 2000-ի: Կարեն Կարապետյանը գոհունակություն է հայտնել կատարված աշխատանքի արդյունքների եւ խնդիրների ձեւակերպման կոնկրետության կապակցությամբ՝ հորդորելով շարունակել նույն տեմպով:

Գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների վերաբերյալ զեկուցվել է, որ մարզում առկա է 1113 հա պտղատու այգի, որից 25 հա-ն ինտենսիվ այգիներ են, մնացած 1028 հա-ն՝ ավանդական, որոնց շուրջ 60 տոկոսը ենթակա է թարմացման: 2018 թ. նախատեսվում է ինտենսիվ այգիների մակերեսն ավելացնել եւս 45 հա-ով՝ դարձնելով 70 հա: Մարզում գործում է 5 սպանդանոց, 2018թ. նախատեսվում է կառուցել եւս 3-ը, 1-ի շինաշխատանքներն սկսվել են: 2017 թ. տարբեր ծրագրերով ձեռք է բերվել 48 միավոր գյուղտեխնիկա. ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորվող լիզինգի ծրագրով ձեռք է բերվել 3 տրակտոր եւ 6 գյուղգործիք, 2018 թ. նախատեսվում է լիզինգով ձեռք բերել եւս 9 միավոր տեխնիկա, ներկայացվել է 7 հայտ: 2018 թ. նախատեսվում է 1.2 մլրդ դրամի ներդրում, 500 աշխատատեղի ստեղծում, ակնկալվում է 5 տոկոս աճ: Կառավարության ղեկավարը նշել է, որ 2018 թ. համար պետք է ավելի բարձր նշաձող դնել՝ հաշվի առնելով Սյունիքի մարզում առկա հնարավորությունները եւ հանձնարարել ակտիվ աշխատել ֆերմերների հետ: Վարչապետը տեղեկացրել է, որ ինտենսիվ այգիների, կաթիլային համակարգի, լիզինգի ծրագրերի համանմանությամբ նույնպիսի ծրագիր է պատրաստվել նաեւ անասնապահության ոլորտի համար. այն կներկայացվի մարտի 15-ին, եւ ֆերմերներին պետք է տեղյակ պահել այդ մասին: **«Սյունիքի մարզում ոչխարաբուծությունը մեծ ներուժ ունի, որովհետեւ Իրանի շուկան շատ մեծ է: Իրանի հետ մենք ունեցել ենք բավական արդյունավետ խոսակցություն: Մենք Իրան արտահանում ենք ընդամենը 25 մլն ԱՄՆ դոլար ապրանք առանց էներգետիկայի՝ այն պարագայում, երբ Իրանը ներմուծում է 41.5 մլրդ ԱՄՆ դոլարի ապրանք: Պայմանավորվել ենք արտահանող-ներմուծող ընկերություն ստեղծել եւ աշխատել ապրանքաշրջանառության ծավալը մեծացնելու ուղղությամբ: Կարծում եմ՝ Սյունիքի մարզի «ֆիշկաներից», մեկը հենց այդ շուկային սահմանակից լինելու հանգամանքը պետք է լինի»**, - ասել է Կարեն Կարապետյանը:

Սյունիքի մարզում ոռոգելի հողատարածքների ծավալը 8.2 հազ. հա է, փաստացի ոռոգվում է 4700 հա. չոռոգման հիմնական պատճառը ներքին ցանցերի բացակայությունն է: Մարզպետի խոսքով՝ Ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ քննարկվել է Մեղրու տարածաշրջանում ջրամբարի կառուցման հարցը: Այժմ ուսումնասիրության փուլում են նախագծային փաստաթղթերը, ծրագրի նախնական արժեքը մոտ 2.5 մլն ԱՄՆ դոլար է: Անդրադառնալով խնդրի լուծմանը՝ վարչապետ Կարեն Կարապետյանն ասել է. **«Ջրամատակարարման ապահովման հարցը մեզ համար թիվ մեկ թեման է լինելու, այսինքն՝ մենք հիմա ինչքան գումար խնայողություն անենք եւ ինչքան ավելի հավաքենք, հիմնական մասն ուղղելու ենք ջրամատակարարմանը: Մեր ջրային ռազմավարության մի մասը հետեւյալն է. խոշոր ջրամբարներից անցում կատարել փոքր ու միջին ջրամբարաշինությանը՝ ներգրավելով մասնավոր բիզնեսին: Ծրագրով 11 ջրամբար է ընտրված՝ բիզնես տրամաբանությամբ: Մենք կսուբսիդավորենք ջրամբարի ծրագիրը՝ կամ գնելու, կամ կառուցելու ժամանակ: Եթե, ասենք, պայմանականորեն 10 միլիոնանոց ծրագիր է, եւ բիզնեսը ֆինանսավորում է 7 մլն-ը, ապա պետությունը կսուբսիդավորի 3 մլն-ը: Արդյունքում կունենանք 10 միլիոնանոց ջրամբարի բանաձեւ եւ ոչ բարձր սակագին: Ես ջրամբարների ծրագրին հավատում եմ եւ պետություն-մասնավոր համագործակցության ամենաարագ արդյունք տվող ծրագրերից մեկն եմ համարում»**, - նշել է կառավարության ղեկավարը՝ առաջարկելով Սյունիքի մարզի բիզնես կառույցների հետ քննարկել եւ կառավարություն ներկայացնել բիզնես ծրագիր:

Սյունիքի մարզպետարանի առողջապահության ոլորտի պատասխանատուն զեկուցել է, որ վճարովի ծառայություններից 2016թ. մուտքագրվել է 151,2 մլն դրամ, 2017թ.՝ 402.4 մլն դրամ. աճը կազմել է 2.6 անգամ: 2018 թ. վճարովի ծառայություններից կանխատեսվում է մուտքագրել 482.0 մլն դրամ, պլանավորված աճը՝ 19.7 տոկոս: 2018 թ. Գորիսի բժշկական կենտրոնը կհամալրվի անգիոգրաֆով, կբացվի ինվազիվ կարդիոլոգիայի բաժանմունքը: Իսկ կրթության վերաբերյալ զեկուցվել է, որ Սյունիքի մարզում կա 118 դպրոց, բոլորում դասավանդվում է ֆիզկուլտուրա, օտար լեզուների դասավանդման մակարդակը նույնպես լավ է: Որոշ դպրոցներում 3 օտար լեզու է դասավանդվում, առաջարկվում է քննարկել նաեւ պարսկերենի դասավանդման հարցը: 40 դպրոցում ներդրվել է ձեռնարկատիրություն առարկան: Ճանապարհի խնդիր չունեցող գյուղական համայնքների դպրոցներում, որոնք կազմում են 30-40 տոկոս, գործում են երեխաների զբաղվածությունն ապահովող տարբեր խմբակներ: Վարչապետն արդյունավետ է գնահատել թե՝ առողջապահության, թե՝ կրթության ոլորտներում կատարված աշխատանքը՝ հորդորելով շարունակել աշխատանքներն էլ ավելի բարձր ցուցանիշներ արձանագրելու ուղղությամբ:

Կարեն Կարապետյանին ներկայացվել է նաեւ «Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագիրը. ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը զեկուցել է, որ նախատեսվում է Գորիսում իրականացնել 54 մշակութային միջոցառում, որոնք կմեկնարկեն հուլիսի 7-8-ին եւ կշարունակվեն մինչեւ ուշ աշուն: ԱՊՀ երկրներից ներկա կլինեն շուրջ 250 արտիստներ, նախատեսվում է պաշտոնական նախարարական պատվիրակությունների մասնակցություն: Հյուրեր կլինեն նաեւ հարեւան, ինչպես նաեւ այլ երկրներից: Արմեն Ամիրյանի խոսքով՝ ծրագրում ներառված են նաեւ մնայուն միջոցառումներ՝ ԱՊՀ երկրների երիտասարդ քանդակագործների սիմպոզիումը, որի շրջանակում ստեղծվելու է 22 քանդակ, որոնք մնալու են Գորիսում, Սերո Խանզադյանի թանգարանի բացումը, գրախանութ-սրճարանի բացումը եւ այլն: Վարչապետը, ողջունելով կատարված աշխատանքը, ընդգծել է, որ միջոցառումները պետք է համահունչ լինեն Գորիս քաղաքի կոլորիտին եւ միջավայրին: **«Գորիսը տուրիստական մեծ ներուժ ունի. սիրուն, ճիշտ կազմակերպված քաղաք է, եւ հիմնական նպատակը պետք է լինի, որպեսզի իրականացվելիք միջոցառումները ոչ թե մեկանգամյա կամ մի քանի օրվա էֆեկտ ունենան, այլ հետագայում էլ ապահովեն Գորիսի զբոսաշրջային գրավչությունը»**, - ասել է Կարեն Կարապետյանը:

**gov.am**
**8 մարտի 2018թ.**

---

Ընթացքում, մարզպետի անբացության շնորհիվ, Սյունիքում 13 հազար հեկտարով պակասել է աշնանացանը եւ քարտեզից ջնջվել Գորիսի տարածաշրջանի Քաշունի գյուղը:

2017-ի ընթացքում (ըստ մարզպետի նախորդ ելույթների) Կապանի օդակայանում ներդրվել է 2.5 մլն դոլար, իսկ 5.5 մլն դոլարով ձեռք բերվել ինքնաթիռ:

Հիմա էլ ասում են՝ 2018-ին օդակայանում նախատեսվում է 4.5 մլրդ դրամի ներդրում:

Նախ՝ պարզ չէ 8 մլն դոլարից բացի (որ իբր ներդրվել է 2017-ին) եւս 4.5 մլրդ դրամ ներդնելու նպատակահարմարությունը: Թե՞ դա 2017-ին ցույց տված ներդրումը (եթե, իրոք, ներդրվել է) մեկ անգամ եւս (2018-ին) ներդրում ձեւակերպելու վահեհակոբյանական հնարամտություն է:

Մյուս կողմից՝ իսկապե՞ս մի անավարտ սպասասրահի համար, որը, բազմաթիվ փորձառու մասնագետների կարծիքով մի քանի տասնյակ հազար դոլար կարող է պահանջել առավելագույնս, 2.5 մլն դոլար է դրվել եւ դրվում:

Շատերին հետաքրքիր մի հարց եւս՝ արդյո՞ք աշխարհի բոլոր օդակայաններն են շահագործվելու համար սեփական ինքնաթիռ ձեռք բերում, չէ՞ որ օդակայան ունենալը մեկ բան է՝ կոնկրետ առաքելությամբ, թռիչքներ իրականացնելն ու փոխադրումներ կատարելը՝ մեկ այլ բան՝ բոլորովին այլ առաքելությամբ: Ասել է թե՝ արժե՞ր 5.5 մլն դոլար, մեր նեղ օրերում, ուղղել ինքնաթիռ ձեռք բերելու համար: Թող էլի գործարկենք օդակայանը, որ իսկապես անհրաժեշտ է, թող էլի թռիչքներ վերսկսենք…

Եթե իսկապես Կապանի օդակայանը պահանջված է, ուրեմն եւ գրավիչ պիտի լինի փոխադրումներ իրականացնող յուրաքանչյուր ավիաընկերության համար: Այդ դեպքում Կապանում սեփական ինքնաթիռ ունենալն անիմաստ կլինի: Իսկ եթե հույս ենք դնում սեփական ինքնաթիռի վրա, ուրեմն ի սկզբանե խոստովանում ենք, որ Կապանի օդակայանը գրավիչ չի լինելու բիզնեսի առումով…

Վարչապետի կառավարման շրջանում, Սյունիքի մարզպետի ջանքերով, գրեթե կազմալուծվեց Սիսիանի հիվանդանոցի գործունեությունը, բայց Կարեն Կարապետյանը մարզի առողջապահական համակարգին գոհություն է հայտնում:

Վարչապետը կրթության ոլորտում կատարվածը նույնպես գնահատում է արդյունավետ՝ ընդամենը նկատի ունենալով (ըստ պաշտոնական տեղեկատվության), որ մարզի բոլոր դպրոցներում դասավանդում են ֆիզկուլտուրա, օտար լեզուներ:

Հետաքրքիր է՝ կա՞ Հայաստանում մի դպրոց, որտեղ չեն դասավանդում ֆիզկուլտուրա եւ օտար լեզուներ:

Մեղա Աստված, իսկապե՞ս վարչապետը տեղյակ չէ, որ տասնամյակներ շարունակ Սյունիքի հանրակրթական դպրոցներում ըստ պատշաճի դասավանդել են ֆիզկուլտուրա, օտար լեզուներ:

Գորիսյան խորհրդակցությունում եւս մեկ անգամ կարեւորվեց պիցցայի՝ 5 աշխատատեղով արտադրամասի ծնունդը, կապանյան ինչ-որ խանութի բացումը, բայց չկարեւորվեց մարզի տասնյակ գյուղերի հոգեվարքը, որ առավել ցայտուն է երեւում համայնքների բռնի խոշորացումից հետո:

Վարչապետը չկարեւորեց նույնիսկ մարզի բնապահպանական ամոթալի վիճակը, որն իր կառավարման ընթացքում ավելի է վատացել. Լիճք գյուղի մերձակայքում Քաջարանի կոմբինատի ավերածությունները՝ ահավասիկ:

Վարչապետն անկարեւոր համարեց իրողությունը, որ իր կառավարման ընթացքում նվազել է Սյունիքի բնակչության կենսամակարդակը, մեծացել աղքատության նիշը, ավելացել արտագնա աշխատանքի մեկնողների թիվը…

Մարզպետը զեկուցում է, թե 2017-ին 573 հիմնական աշխատատեղ է ստեղծվել մարզում:

Պաշտոնական վիճակագրության մեջ չենք գտնում այդ թիվը:

Գոնե ուշացումով կարո՞ղ է տեղեկացնել, թե կոնկրետ որտեղ են ստեղծվել այդ աշխատատեղերը եւ ինչ կապ ունի մարզպետն այդ ամենի հետ:

Մարզպետը շրջանցել է միայն կազինոյի հարցը, Մեղրիում 22 հարկանի շենք կառուցելու խոստումը: Ի դեպ, վերջին ելույթներում խուսափում է խոսել այդ մասին, ինչը զարմացնում է. առանց կազինոյի, առանց 22 հարկանի շենքի ինչպե՞ս է մարզպետը կյանքի կոչելու Սյունիքը պարսիկների համար զվարճանքի վայր դարձնելու իր անբարո երազանք-խոստումը:

Եվ, այդուհանդերձ, վարչապետը հպարտ կեցվածք ընդունած ինչ-որ անստույգ թվեր է շաղ տալիս մարզպետի ձայնակցությամբ, ինչ-որ գաղափարներ հռչակում:

**Բայց մենք չենք զարմանում ու նորից ենք ուզում ճշտել՝ վարչապետն ի՞նքն է կամենում, որ իրեն խաբեն ու իրականությունն աղավաղեն, թե՞ մարզպետն է իր նախաձեռնությամբ խաբում հանրապետության կառավարության ղեկավարին:**

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Ամենայն վայոցձորցի բանաստեղծուհին...

Վայոց ձորում է ապրում եւ ստեղծագործում մանկավարժ, բանաստեղծուհի, հասարակական գործիչ Լուսիկ Մկրտչյանը, ով օրերս հատեց կյանքի ութերորդ տասնամյակի սահմանագիծը: Նրա աշխատանքային ողջ կենսագրությունն անցել է Վայոց ձորում: Դասավանդել է ծննդավայրի՝ Արտաբույնքի, ապա շրջկենտրոն Եղեգնաձորի տարբեր կրթօջախներում: Վայոց ձորի գրեթե ամեն մի համայնքում կարելի է հանդիպել նրա սաներին: Որպես մանկավարժ, դաստիարակ եւ կրթիչ Լուսիկ Մկրտչյանն անջնջելի հետք է թողել վայոցձորյան կրթական համակարգում:

Լուսիկ Մկրտչյանն օժտված է բնատուր բանաստեղծական շռայլ ձիրքով: Մինչեւ օրս ընթերցողի գրասեղանին են դրվել նրա հետեւյալ ժողովածուները. «Կարոտի բույրը», «Ջինվորի երգը», «Օրենքի պաշտպան», «Տատ, ինձ հետ մնա», «Հավատի մեղեդի», «Պարույր Սեւակի հետ», «Դպրոցական սցենարներ», «Արտաբույնք» (վեպ), «Աշնան ժպիտ»:

Լուսիկ Մկրտչյանի բանաստեղծությունները վաղուց գտել են դեպի ընթերցողի սիրտը տանող ճանապարհը: Նրա հեղինակած գրքերը մեծ տարածում ու մասսայականություն ունեն Վայոց ձորում: Իր մասին շատ է գրվել ու խոսվել, ֆիլմ է նկարահանվել:

Իր բանաստեղծուհի դստեր 80-ամյակը նույնպես Վայոց ձորի հանրությունը նշեց ընդգծված հարգանքով ու պատկառանքով, շռայլ ելեւէջումով: Վայոց ձորի մտավորական ընտրանին հավաքվել էր Եղեգնաձոր քաղաքի թիվ 3 դպրոցի ընդարձակ ու գեղեցիկ դահլիճում: Բե-

մի խորքում փառահեղ շուքով թիկն էր տվել 80-ամյա հոբելյարը, ով այդ երեկո այնքան գեղեցիկ ու արժանապատիվ խոսքեր լսեց իր մասին, իր արարած գրքերի, բանաստեղծությունների, երգերի մասին:

Շատերը մոտեցան ամբիոնին եւ բարձրախոսի առջեւ հուզմունքով եւ պատկառանքով ասացին իրենց խոսքը: Մեկը մյուսի հետեւից հնչում էին հուզիչ ելույթներ, որոնցում գնահատվում, իմաստավորվում էր բանաստեղծուհու անցած ուղին:

Մանկավարժ գործնկերներից խոսք ասացին Եղեգնաձորի թիվ 1 դպրոցի ուսուցչուհի Կարինե Մովսիսյանը, մանկավարժ եւ արձակագիր Նորիկ Առաքելյանը, Եղեգնաձորի թիվ 3 դպրոցի տնօրեն Կարինե Հարությունյանը, Արտաբույնքի միջն. դպրոցի տնօրեն Մեսրոպ Բաբայանը, պատմաբան, արձակագիր, բանաստեղծ Արմեն Կարապետյանը:

Հոբելյարի գործունեության տարբեր ոլորտների ու դրսեւորումների վերաբերյալ ընդգծուն շեշտադրումներ կատարեցին բանաստեղծի հայրենակից, արձակագիր Սերյոժա Գասպարյանը, ռեժիսոր եւ սցենարիստ Նաիրի Հովհաննիսյանը, ճանաչված երգահան, երգիչ Գրիգոր Գրիգորյանը, հեղինակային երգի հայտնի կատարող Արմեն Ադամյանը: Վայոց ձորի մարզպետի ողջույնի խոսքը փոխանցեց մարզպետարանի հանրային կապերի բաժնի պատասխանատու Սոնա Մարգարյանը:

Հանդիսության ողջ ընթացքում հնչում էին Լուսիկ Մկրտչյանի լավագույն բանաստեղծությունները, իսկ ասմունքին մեջընդմեջ հաղորդում էին ազգային-հայրենասիրական երգերի ու պարերի ոգեշունչ կատարումները: Եղեգնաձորի տարբեր կրթօջախների մի խումբ շնորհալի դպրոցականներ անթերի վարպետությամբ կատարեցին ազգային ու ժողովրդական սիրված երգերն ու պարեղանակները: Հանդիսության վերջին մասում երախտագիտության խոսքով հանդես եկան հոբելյարը, նրա որդիները՝ Արթուր եւ Ավագ Հարությունյաններն ու բժշկուհի դուստրը՝ Գայանե Հարությունյանը: Հանդիսության պաշտոնական մասի ավարտից հետո ջերմաշունչ խոսքն ու զրույցը շարունակվեց տոնական սեղանի շուրջ:

Մեծարանքի սույն հանդիսությունը եւս մեկ անգամ եղավ ակնառու վկայությունն այն բանի, թե Վայոց ձորի գրական հասարակայնությունը, նաեւ ողջ ժողովուրդը որքան հարգում, սիրում ու պաշտում է իր պատմությունից եւ ակունքներից ծնված բանաստեղծուհուն՝ արժանիորեն անվանի Լուսիկ Մկրտչյանին, ով անցել է կյանքի ու հասարակական գործունեության, ստեղծագործական աշխատանքի բուռն ու բերքառատ, արդյունավետ ու սքանչելի մի ճանապարհ:

Իսկ ճանապարհն այդ դեռ շարունակվում ու շարունակվելու է, ուստիեւ նոր շքեղ ու բեղուն հանգրվաններ են սպասվում...

**Արմեն Կարապետյան**
**ՀՀ լրագրողների միության անդամ, պատմաբան, բանաստեղծ եւ արձակագիր**

# Առայժմ երրորդ հորիզոնականում

Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն 26-րդ առաջնության գարնանային փուլը փոփոխական հաջողություններով է մեկնարկել Կապանի «Գանձասար-Կապանը»: Այդ փուլը թիմը սկսեց երկրորդ տեղով՝ 24 միավորով, առաջնության առաջատարից՝ Երեւանի «Ալաշկերտից» հետ մնալով վեց միավորով: Առաջնության գարնանային փուլի անդրանիկ խաղում «Կապան-Գանձասարը» անսպասելիորեն պարտություն կրեց առաջնության հետնապահից՝ Երեւանի «Արարատից»: Երկրորդ խաղում «Փյունիկի» հետ հանդիպման հինգերորդ րոպեին 11 մետրանոց հարվածով խփած գնդակը հաղթանակ բերեց «Գանձասար-Կապանին»:

Ստացվել է այնպես, որ երեք օրը մեկ թիմը հանդիպում է անցկացնում: Մարտի 7-ին «Գանձասար-Կապանը» «հյուրընկալվեց» Գյումրու «Շիրակին»՝ Հայաստանի գավաթի խաղարկության շրջանակում: «Հյուրընկալվելն» էլ չակերտների մեջ է առնված, քանզի դա սեփական հարկի տակ հանդիպում է, բայց մարզադաշտի խնդիրների հետ կապված՝ «Գանձասար-Կապանը» հանդես է գալիս մրցակցի հարկի տակ: Ինչեւէ, հանրապետության գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ այդ հանդիպումն ավարտվեց 1:1 հաշվով: Պատասխան հանդիպումը կկայանա ապրիլի 18-ին:

Առաջնության հերթական հանդիպումը եւս մարտի 10-ին «Գանձասար-Կապանը» անցկացրեց «Շիրակի» հետ Գյումրիի քաղաքային մարզադաշտում: Առաջինը հաջողության հասան կապանցիները, ինչպես երեք օր առաջ գավաթային հանդիպման ժամանակ, սակայն գյումրեցիներին հաջողվեց ոչ միայն խուսափել պարտությունից, այլեւ կամային հաղթանակ տոնել 2:1 հաշվով: Պարտությունից հետո էլ կապանյան թիմը շարունակում է իր տեղը պահպանել երկրորդ հորիզոնականում՝ երրորդ տեղում ընթացող Երեւանի «Բանանցից» առաջ անցնելով մեկ միավորով:

Առաջնության հաջորդ հանդիպումը «Գանձասար-Կապանը» անցկացրեց մարտի 17-ին Երեւանի «Բանանցի» հետ, խաղն ավարտվեց 2:2 հաշվով, իսկ թիմը հայտնվեց երրորդ տեղում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Սփեղծագործում են մանուկները.

## Մարիամ Սահակյան (Գորիս)

### Ջինվորին

Այս քառօրյայից մի դաս քաղեցի,
Մի պարզ հանգամանք ես հասկացա,
Թե ո՛վ է երկրի կարեւոր մարդը,
Թե ո՛րն է նրա գործած սխրանքը;

Երբ բոթը լսվեց Քյարամի՛, Արմենի՛,
Իմ խաղաղ քնած եղբայր Դավիթի,
Հայոց աշխարհը ցավից գալարվեց,
Ողջ հույսերը մեր սահմանին այրվեցին;

Եւ մի առավոտ, երբ լույսը բացվեց
Ջինվորի հանդերձով հայրս տան շեմին կանգնեց,
Բացեց թեւերը, ինձ ամուր գրկեց,
Ջինվորին վայել խրատներ տվեց:

Հայր, որդի, եղբայր, ամուսին,
Եւ երբ բոլորն այսպես խառնվեցին,
Մի շատ պարզ իմաստ կազմեցին,
Ջինվոր, այն էլ՝ ի՛նչ զինվոր հայ ազգի զինվոր:

Ձմռան ցուրտ շնչին, ամռան այրոցին,
Թշնամու հասցրած հուժկու հարվածից
Ջգոն կանգնած է արծվի նման,
Նա չի կոտրվում ոչ մի փոթորկից,
Չի էլ շիկանում ոչ մի կրակից:

-Չեմ քնի, իմ մա՛յր, որ քնես խաղաղ,
Պատիվդ փառքով կպահեմ, եղբա՛յր,
Պապերիդ տված խոստումը, հա՛յր իմ,
Երդվում եմ, երդվում, պիտի կատարեմ:

Իսկ դու, իմ քնքու՛շ, իմ համբերատա՛ր,
Իմ երազների՛ օրիորդ հոգատար,
Սպասի՛ր ինձ, սպասի՛ր, ես հաստատ կգամ:

### Շիրազին

Գարունքի բույրից մի հոգի ծնվեց,
Ջեփյուռը՝ նրան Շիրազ անվանեց,
Ու լցվե՛ց հոգին համբույրով ջահել,
Գիտեր, որ նրան պոետ կանվանեն:

Ծաղկեցին, փայլեցին մտքերը նրա,
Արեւը նրան հավերժ թագադրեց,
Ու միտքը նրա գարունքով լցրեց,
Որ հավերժ երգի գարուն, անշեջ սեր:

Չնկատելով քարերը ճամփի,
Չհրկիզվելով շանթերից բախտի՝
Քայլեց, քայլեց, որ երգի «մա՛յր իմ սիրելի»
Երգեց, որ լսվի «սեր իմ նազելի»:

# Լեւոն Աղասյանը ոսկե մեդալ է նվաճել Ստամբուլում

Հայաստանի ներկայացուցիչ Լեւոն Աղասյանը երկրորդ տարին անընդմեջ նվաճել է աթլետիկայի Բալկանյան երկրների ձմեռային առաջնության եռացատկի չեմպիոնի տիտղոսը:

Թուրքիայի Ստամբուլ քաղաքում անցկացված մրցաշարում կապանցի 23-ամյա եռացատկորդը հաղթել է 16.35 մ արդյունքով: Արծաթե եւ բրոնզե մեդալները բաժին են հասել

Բուլղարիայի ներկայացուցիչներ Մոմչիլ Կարաիլիեւին (16.27 մ) եւ Ռումեն Դիմիտրովին (16.21):

Աթլետիկայի Հայաստանի թիմի կազմում մրցավայր էր մեկնել 5 մարզուհի եւ 6 մարզիկ:

Հիշեցնենք, որ Ռիո-2016 Օլիմպիական խաղերի մասնակից Լեւոն Աղասյանը Բալկանյան երկրների ձմեռային առաջնությունում հաղթել էր նաեւ նախորդ տարվա փետրվարին, երբ նրան Բելգրադում պարգեւատրել էր Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ, հեռացատկի Եվրոպայի ռեկորդակիր Ռոբերտ Էմմիյանը:

**sport.news.am**
**18 փետրվարի 2018թ.**

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Ⓡ Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1210, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 19.03.2018թ.: